քաղաքներու մէջտեղը. մօտ է սուրբ տեղերուն և հաճելի աւան-ներուն։ Վաճառականութիւնը հոն ծաղկած է, և շուկաները առաջ-նակարգ են։ Գեղակերտ մզկիթներ չկան հոն, բացի մէկէն։ Հացը լաւ է և ճերմակ. ուրիշ տեղերու նայելով՝ տեղւոյն հողը շատ արգաւանդ է, և պտուղներն ալ հիւթեղ։ Այս մայրաքաղաքը կը գտնուի պտղաւէտ դաշտերու, պարսպապատ քաղաքներու մէջտեղը։ Ան ունի հոյակապ հիւրանոցներ և հաճելի բաղնիքներ, ընտիր աննդեղէններ եւ զանազան շաքարեղէններ, ընդարձակ տուներ, գեղեցիկ մզկիթներ և լայնարձակ պողոտաներ։ Իբր մայ-րաքաղաք՝ ան ունի շատ մը առաւելութիւններ։ Շինուած է դաշտի մը վրայ և մօտ է թէ՛ լեռներուն և թէ՛ ծովուն։ Հոն կ'ածին թէ՛ թզենիներ և թէ՛ արմաւենիներ. իր դաշտերը ոռոգումի պէտք չունին, և ի բնէ պտղաւէտ են և հարուստ։ Այս առաւելութիւններուն հակառակ Ռեմլէն ձմեռը ցեխոտ է և ամառն ալ աւազի փոշիով լեցուն. հոն վազուն ջուր չկայ, ոչ ալ կանաչութիւն. հողը խոնաւութիւն չունի, և ոչ ալ ձիւն կու գայ։ Ջրհորները խոր են և աղի. անձրեւի ջուրը կը հաւաքուի փակ ջրամբարներուն մէջ, — այնպէս որ աղքատը ծարաւ կը մնայ և օտարականները ի զուր ջուր կը փնտռեն։ Քաղաքը մէկ քառակուսի մղոն տեղ գրաւած է։ Տուները շինուած են յղկուած գեղեցիկ քարերով։ Իր դուռներն են Զինուորաց Ջրհորին դուռը (Տարպը Պիր էլ Ասքար), Աննապահ մզկիթին դուռը, Երուսաղէմի դուռը, Պիլահի դուռը, Լիւդի դուռը (Տարպը Լիւդ), Եաֆայի դուռը (Տարպը Եաֆա), Եգիպտոսի դուռը (Տարպը Մըսր) և Տաճունի դուռը. Ռեմլէի մօտ է Տաճուն քաղաքը իր մզկիթով։ Հոն կը բնակին առաւելապէս Սամարացիները։

Ռեմլէի գլխաւոր մզկիթը շուկային մէջ է. և աւելի գեղեցիկ է և սիրուն քան Դամասկոսինը։ Ան կը կոչուի Էլ Ապիյաս (Սպիտակ Մզկիթ), և հոն կը գտնուի գեղեցիկ միհրապ մը եւ անոր բեմը գեղատեսիլ է Երուսաղէմինէն յետոյ. մինարէն շինած է Խալիֆա Հիւշամ Իպն Ապտ էլ Մէլէք։ Հօրեղբօրմէս լսած եմ թէ երբ այս Խալիֆան մինարէն կը շինէր, տեղեկութիւն առաւ թէ քրիստոնեաները այս ժամանակ մարմարէ սիւներ ունենալով՝ թաղած էին զանոնք աւազի տակ և պատրաստած էին Պալիահի եկեղեցիին համար։ Նոյն ատեն Հիւշամ խալիֆան կ'աղաչարարէ քրիստոնէից թէ՝ եթէ ցոյց չտան պահուած